ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Հասցե՝ 0095 Երևան, Բաղրամյան 19, 124, հեռախոս՝ (11) 513 440

09 ապրիլի 2019թ.

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահի տեղակալ
ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի Տնտեսական հարցերի
մշտական հանձնաժողովի նախագահ
ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոնայք,

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասը և 78-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը՝ ներկայացնում եմ ««Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ «Օրենք») լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ «Նախագիծ», կոդ՝ Պ-013-12.02.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ հետևյալ առաջարկները.

1. Նախագծի 3-րդ հոդվածում «2)»-րդ կետով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող (ժդ) կետը լրացնել հետևյալ բառերով՝ «, ինչպես նաև սույն օրենքի 5.1-ին հոդվածով սահմանված՝ տվյալ քաղաքացիների՝ տոտալիզատորին մասնակցությունը սահմանափակող՝ օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռի առկայության հանգամանքը»:
2. Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 5.2-րդ հոդվածի 2–րդ մասի վերջին նախադասությունը լրացնել հետևյալ բառերով՝ «՝ անձի նույնականացման և նրա՝ օրենքով սահմանված տարիքի հասած լինելու հանգամանքը ստուգելու պարտադիր պայմանով»:
3. Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսված՝ Օրենքի 5.1-ին հոդվածով սահմանված պահանջները խախտելու դեպքը սահմանել ոչ թե որպես կազմակերպչին տուգանելու համար հիմք, այլ Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված լիցենզիայի գործողության կասեցման համար առանձին

հիմք, սահմանելով նաև կասեցման հստակ ժամկետ, կամ բարձրացնել տուգանքի չափը:

4. Նախագծի 6-րդ հոդվածի «2)»-րդ կետով՝ Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող (գ1) կետում «5.2 հոդվածով» բառերը փոխարինել «5.2-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերով՝ սահմանելով նաև կասեցման հստակ ժամկետ:
5. Եթե կազմակերպիչը խախտել է Օրենքի 5.2-րդ հոդվածի 1-ին կամ 3-րդ մասերով սահմանված պահանջները, ապա այդ խախտումները սահմանել որպես Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված լիցենզիայի գործողության դադարեցման համար առանձին հիմքեր:
6. Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող՝ Օրենքի 5.2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ նոր պարբերությամբ՝ «Վիճակախաղի մի կազմակերպչի կողմից (անմիջականորեն իր կամ դուստր կազմակերպության միջոցով) մեկ բուքմեքերային գրասենյակի կամ անմիջականորեն (մեկ խաղասրահի միջոցով) տոտալիզատոր կարող է կազմակերպվել նաև Հայաստանի Հանրապետության սույն մասում չնշված այլ յուրաքանչյուր մարզում որևէ մեկ համայնքի վարչական սահմաններում և Երևան քաղաքի յուրաքանչյուր վարչական շրջանի վարչական սահմաններում՝ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հեռավորությամբ և չափանիշներին համապատասխան տարածքներում:»:
7. Նախագծի 7-րդ հոդվածում «2019 թվականի նոյեմբերի 1-ից» բառերը փոխարինել «2020 թվականի հունվարի 1-ից» բառերով:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

ԱՐԿԱԴԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ